XVIII Դ. ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

Հայոց մշակութային վերանորոգման շարժումը, որ նոր կերպարանք է առնում XVIII դ. հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի համատեղ զարգացմամբ, ներգործում է նաև գեղարվեստական գրականության վրա։ Գրական երկը, իր հերթին, թարմանում է։ Փոփոխությունը կատարվում է և՛ գեղագիտական, և՛ գաղափարական առումներով։ Դարի հոգևոր ու աշխարհիկ առաջավոր գործիչներն իրենց ստեղծագործություններում վերակենդանացնում են հայ հին և միջին դարերի գրականության ոգու և արվեստի լավագույն գծերը և հետևելով նաև նոր ժամանակների լուսավորյալ աղգերի մտքի նվաճումներին, զարգացնում են հայ նոր ազգային լուսավորական դրահանությունը։ Գեղարվեստական գրականության համար ևս սա վերանորոգության կամ անցման շրջան է, հնի և նորի համերաշխության և ներդաշնակության, միաժամանակ հնի և նորի ներքին պայքարի մի շրջան, որն ամուր հիմքեր է ստեղծում նոր ազգային դասական գրականության լայնահուն զարգացման համար։

XVIII դ. հայ հին և նոր գրական երևույթների այս խաչաձև զարգացման առաջին արդյունքը եվրոպական կլասիցիզմի տեսական հայացքների ներթափանցումն է հայ իրականություն։ Իրապես հենց այս շրջանում հայ գրականության տեսության մեջ առաջին անգամ տեղի է ունենում գրական սեռերի տեսական բաժանում, և նրանց զարգացումը դրվում է կանոնական, ծրագրային հիմքերի վրա։ Դա գրական երկի արտաքին, ընդհանուր փոխակերպության արդյունքն էր։ Իրենց առանձնահատկություններով և ընդհանրություններով, ինքնուրույն զարգացման նոր ընթացք են բռնում գեղարվեստական արձակը, բանաստեղծությունը և թատերգությունը՝ դրաման։ Ստեղծվում են բանաստեղծության, վիպասանության, թատերգության, գրական երկի արվեստի ու բովանդակության, կառուցվածքի, կերպարների, լեզվի և ոճի, արտահայտչական եղանակների, երաժշտականության վերաբերյալ չափածո և արձակ կանոնական երկեր, մշակվում են տեսական օրենքներ, հիմունքներ, բանաձևեր, տրակտատներ (Խ. Էրզրումեցի «Համառոտական իմաստասիրութիւն կամ Բովանդակութիւն ամենայն ուսմանց», Մ. Սեբաստացի «Համառոտական ճարտասանութիւն»[1], «Ցաղագս մաթեմատիկա-

---

[1] *XVIII դ. հայ տեսական, գեղագիտական մտքի պատմության ուսումնասիրության համար օգտակար աղբյուրներ են Մ. Սեբաստացու «Համառոտական ճարտասանութիւն դիւրին ոճիւ և վայելուչ օրինակաւ», «Ցաղագս մաթեմատիկայի, որ է «Թուաբանութիւն, երկրաչափութիւն, աստղաբանութիւն, բանք տոմարագիտականք, երաժշտականութիւն, ընգհայեցողութիւն, կշռորդաբանութիւն» աշխատությունները և «Բառգիրք Հայկազեան լեզուի» համապատասխան հոդվածները։ Եվրոպական կլասիցիզմի տեսական սկզբունքները հայոց վերանորոգվող գրականության մեջ արմատավորելու այն նպատակը, որ հետապնդում էր Խ. Էրզրումեցին իր*

յի», Ս. Ագոնց «Ճարտասանութիւն բովանդակեալ ի հինգ գիրս», Պ. Կաղզվանցի «Բան առ ընթերցողսն» և այլն)։

Հայոց գեղարվեստական գրականությունը XVIII դ., հավատարիմ հնոց գեղագիտական ավանդներին, իր նախնական մայրերն է անում թևակոխելու հին աշխարհից սկիզբ առած, կանոնական հիմքերի վրա դրված գրական սեռերի զարգացման նոր, եվրոպական ճանապարհը։

Այս նոր ճանապարհի վրա գրական երկը, առավել քան ձևով, արվեստով, փոխակերպվում է ներքնապես, գաղափարական բովանդակությամբ, նյութով։ Դարի դրական շարժման առաջադեմ ներկայացուցիչներն իրենց երկերում դրսևորում են կենսահայեցողության նոր գծեր, փնտրում են կյանքը համեմատաբար լայն ու քննաբար վերարտացոլելու այլ եղանակներ և ուղիներ։ Գեղարվեստական արձակը թարմանում է նոր երկերով։ Սոսկ կենցաղային, բարոյախոսական, մեծ մասամբ հրաշապատում գրական զրույցների, հանելուկների, առակների, արձակ այլ էջերի կողքին հանդես են գալիս նաև իրական, առարկայական փոխհարաբերությունների շուրջը, քաղաքական ազատասիրական մտայնության, ուսումնակրթական, դաստիարակչական բնույթի արձակ ստեղծագործություններ՝ նամականի, անցք և պատմություն, զրույց, վիպասանություն, տեսիլք (Պ. Դպիր, Գր. Կամպանյան[2], Հ. Նալյան, Գր. Օշականցի, Պ. Կաղզվանցի, Հովհ. Բերիացի և այլք)։

XVIII դ. հայ նոր և ընդհանուր վերանորոգության շարժման ընդերքում է սաղմնավորվում ու ծնունդ առնում նաև նոր դասական թատրոնը։ Հայտնի է, որ հայ նոր թատրոնի (դպրոցական) սկիզբը նշում են 1660-ական թվականներին Լվովի հայկական գաղութում բեմադրված «Հռիփսիմէ», «Կեսարի մահը», «Սողոմոնի առակները», «Հրովիկիոսի մահը» պիեսների բեմադրության փաստով։ Սակայն, ինչպես ճիշտ նկատում են թատերագետները, այդ նշանակալից պատմական իրողությունը սոսկ մի օղակ է անշղթա, օտարամուտ մի երևույթ, որ ոչ մի հետք չի թողնում հայ թատրոնի պատմության մեջ։ Իրապես հայ նոր թատերդությունը, դրաման՝ իբրև գրական սեռ և թատրոնը՝ իբրև արվեստի կարևոր մի ճյուղ, սկզբնավորվում և անընդմեջ զարգացման ճանապարհ է հարթում XVIII դ.։ Այդ ճանապարհի շինության պատիվը, ինչպես հայտնի է, պատկանում է Վենետիկի Մխիթարյան միաբանությանը։ Հ. Զեքիյանի «Հայ թատրոնի սկզբնաքայլերը...» աշխատության նոր փաստերով ևս հաստատվում է, որ 1730 թ. ի վեր Մխիթարյանները գրում և բեմադրում էին թատերական երկեր՝ վկայաբանական, պատմա-հայրենասիրական, կենցաղային պիեսներ, ողբերգություններ («Խաղ հիւանդին», «Բաղամ և Բաղաղ», «Նահատակութիւն Տէր Կոմիտասայ», «Հաճի Մելքոն», «Բարեկենդան», «Խաղ ճգնաւորաց», «Յովսէփ», «Յոբ», «Յովասափ», «Անհաւատ Սառաֆի նենգասիրութիւնը», «Տէր Փիլոս», «Դաւագործ մահ Խոսրովոյ արքային հայոց Յանակայ», «Տեսիլ հանդիսի», «Վարդան Մամիկոնեան»,

---

«Համառոտական իմաստասիրութիւն» երկհատորանոց ոտանավոր շարադրանքով, նույն նպատակն էր հետապնդում նաև Մ. Սեբաստացին՝ դասավանդության իր վերոհիշյալ ձեռնարկներով և հանրահայտ բառարանով։

2 Գր. Կամպանյանը ունի բազմաթիվ անտիպ բանաստեղծություններ։ Ըստ երևույթին նրա գրչին է պատկանում նաև Պետրոս Առաջինին նվիրված գրական ստեղծագործությունը։

«Արկածք Երուանդեան Տիգրանայ» և այլն)[3]։ Բեմադրված ողբերգություններ-ի և զավեշտական պիեսների զանազանության փաստը համոզում է, որ Մխիթարյան թատրոնը ի սկզբանե սոսկ կրոնական, դավանաբանական սահմանափակ ուղղություն չի ունեցել, ինչպես կարծում են թատերագետներից ոմանք, այլ հետապնդել է կրոնա-ազգային, կրթական, դաստիարակչական, հայրենասիրական նպատակներ։ Հ. Հովհաննիսյանի քննական մենագրության[4] այն դրույթը, թե հայ թատրոնի միջնադարյան պատմությանն ուղեկցում է ժողովրդական, անգիր, բանավոր թատերգությունը, նույնպես համոզում է, որ գրավոր, դասական թատրոնը հայ նոր և ընդհանուր վերանորոգության շարժման ծնունդ է. այն սկզբնավորվում է XVIII դ. երկրորդ-երրորդ տասնամյակներում, Վենետիկում ու այնուհետև դառնում համահայկական երևույթ։ Ի դեպ, հենց այստեղ նկատենք, որ XVIII դ. առաջին հիսնամյակում Մխիթարյան շրջանակներից դուրս ևս թերևս ստեղծվել են թատերատիպ այլ ստեղծագործություններ։ Հ. Նալյանի «Կտակ չարչարանաց» արձակ և չափածո, երգախառն ընդարձակ երկը դրամատիկական մի սքանչելի պոեմ է, որ կարող էր նաև ինչ-որ եղանակով ներկայացված լինել։ Այսօրինակ երկեր շատ են գրվել։

Գաղափարական առավել խոր փոփոխություն է կրում XVIII դ. գրավոր բանաստեղծությունը։ Ստեղծվում են ժամանակակից և պատմական թեմաներով՝ հասարակական, տնտեսական, քաղաքական, ուսումնական, դպրոցական, կրոնա-բարոյակրթական հարցերի շուրջ նոր բանաստեղծություններ՝ տաղեր, ներբողներ, մեղեդիներ, պոեմներ, երկտողյակներ և քառյակներ (Սահակ երեց «Ի նուաղիլ հայոց ազգի», Մ. Ջուղայեցի «Ողոք աղերսանաց արտասուաց», Հարություն Բյուզանդացի «Այն կեանքն անգին մարգրիտ...», Կոմիտաս Քյոմուրճյան «Ողբերգական աւաղմունք...», Պ. Վանեցի «Պարիսպ չունի իմ քաղաքին...», Ղ. Ջահկեցի «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին», «Երգ Վարդանայ զօրավարացն հայոց...», Պ. Նախիջևանցի «Ողբ», «Բանք աղօթականք ի խորոց սրտէ...», «Յաւուր նեղութեան», «Աղերս մեծատան», «Երգ աղերսախառն ի մուտ նոր տարւոյն», «Յաւուր երաշտութեան...», Հ. Նալյան «Առ անձն իւր», «Խրատք...», Հար. Կարնեցի «Աստուածածօն մատացն քոց», «Ազգիս հայոց սա վարժարան...» և այնուհետև Պ. Դպրի, Պ. Ղափանցու, Գր. Օշականցու, Հովհ. Կարնեցու, Մ. Կարնեցու և տասնյակ ու տասնյակ ծանոթ և անծանոթ այլ բանաստեղծների հարյուրավոր երգեր)։ XVIII դ. գրավոր բանաստեղծության վրա ուժեղ է առավելապես V—XIII դդ. հայ դասական գրականության ու արվեստի, պատմագիտության ու փիլիսոփայության ազդեցությունը։ Բանաստեղծությունը մարմնավորում է Մ. Մաշտոցի, Մ. Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գ. Նարեկացու, Ն. Շնորհալու և այլոց ավանդներն ու գեղագիտական շատ սկզբունքներ։

Իբրև նախորդ դարերի հայ կյանքի ընդհանուր անկման ընդդիմադիր ելակետ երևույթ, գրական շարժման վերոհիշյալ ներկայացուցիչները հեն-

---

[3] Հ. Լ. Ջեքիյան, Հայ թատրոնի սկզբնաքայլերը և վերածննդի շարժումը, Վենետիկ, 1975։

[4] Հ. Հովհաննիսյան, Հայ թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978։

վում են նոր ժամանակների փիլիսոփայության մեջ դեռևս իր կշիռն ունեցող ռացիոնալիզմի վրա. հավատք-հայրենիք, կրոն-գիտություն բացորոշ նշանաբանով, կամ դրանց մի նոր շաղախով, նրանք, հաճախ տարբեր մտայնությամբ և տարբեր ճանապարհներով, ձգտում են վերակենդանացնելու նիրհող հայ կյանքը, վերաշինելու հայոց ընդհանրական տունը։

Հին և նոր գրական երևույթների խաչաձև զարգացման մի այլ շոշափելի արդյունքը հայոց բանաստեղծության ներքին համակարգի փոխակերպությունն է։ Խորանում, բացորոշվում են ժողովրդա-աշուղական և գրավոր, դասական բանաստեղծության սահմանագծերը։ Նրանցից յուրաքանչյուրն իր զարգացման ընթացքի մեջ դառնում է առավել իրապաշտ և առավել տոհմային։ XVII դ. վերջերից և XVIII դ., Նաղաշ Հովնաթանի և Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ, աշուղական բանաստեղծությունը հասնում է այնպիսի բարձունքի, որպիսին չէր տեսել նախորդ շրջանը։ Դա պայմանավորվում է աշխարհականացման նոր, լայն ընթացքով։ Բայց միաժամանակ դա հայ նոր վերանորոգության արգասիքն է, նրա երևույթներից մեկը՝ երկրորդաբար։ Ստար, արևելյան կենսաշունչ արվեստը մուտք է գործում հայության լայն շրջանները և նրա ընդհանուր վերելքի ազդեցությամբ զարգանում, տեղայնանում է։ Հայտնի է, սակայն, և անվիճելի, որ աշուղական բանաստեղծությունը վերանորոգվող հայ նոր ազգային կյանքի անմիջական ծնունդը չէ և ոչ էլ դարի հայոց բանաստեղծության միակ իշխող եղանակը։ Աշուղական բանաստեղծությունը կոչված չէր կատարելու այն դերը, ինչ որ վերապահվում է ամեն մի ժողովրդի դասական-ազգային, ղեկավար գրականությանը[5]։ Աշուղական բանաստեղծության բուռն զարգացման շրջանում, իսկ մշակութային նոր վերանորոգության շարժման անմիջական ազդեցությամբ վերազարգանում, աշխուժանում է նաև դասական գրականությունը, գրավոր, գրաբարալեղու բանաստեղծությունը։

Հիրավի, գրական վերոհիշյալ երեք հիմնական սեռերի մեջ, ավելի քան գեղարվեստական արձակն ու թատերդությունը, բանաստեղծությունն է, իր ժողովրդական, աշուղական և գրական-դասական շերտերով, ստանում զարգացման լայն ճանապարհ։ Եվ դա հասկանալի է։ Բանաստեղծությունը հայ ժողովրդի ստեղծագործական մտքի առավել ուժգին տարերքն է, նրա գրական ժառանգության ամենահին և ամենահարուստ բաժինը։ Միջնադարյան ամեն մի գրական երկ բանաստեղծություն է յուրովի. «Երկար դարերի ընթացքում,— նկատել է հայկական դատի պաշտպան լորդ Բրայսը (1916 թ. Լոնդոնում Շեքսպիրի ծննդյան 300-ամյակին նվիրված հայկական հանդեսում իր արտասանած ճառում),— երբ նեղուցներից այն կողմը գրականություն գոյություն չուներ, գրականությունն իր ծաղկած երիտասարդությունն էր ապրում Հայաստանում։ Բանաստեղծական ավյունը երբեք չցամաքեց այնտեղ... Չկա ուրիշ երկիր և այլ ժողովուրդ, որ այնքան շատ ողբերգական և հուզիչ նյութ մատակարարած լինի բանաստեղծության համար, որքան Հայաստանը։ Նրա պատմությունը, դարերի ընթացքում եղել է հալածանքի ու

5 Հայ գրականագիտության մեջ այս հայացքը անուղղակիորեն պաշտպանում է Մ. Աբեղյանը, և ապա բացահայտում և զարգացնում են Ս. Սարինյանը և ուրիշներ։

վտանգի, անընդհատ դիմադրության պատմությունն»[6]։ Իրոք, հայ ժողովրդի հալածանքի ու վտանգի, անընդհատ դիմադրության պատմությունն է ծնել նրա հարուստ բանաստեղծությունը։

XVIII դ. բանաստեղծությունը ողբի և սթափումի բանաստեղծություն է՝ լայն առումով։ Ողբը, հույսի շաղախով, միջնադարյան հայոց քնարերգության իշխող եղանակն է, նրա ամենաբնորոշ գծերից մեկը... XVIII դ. նկատելիորեն փոխվում է գրական բանաստեղծության այդ եղանակը։ Ողբի և սթափման երգերի մեջ ավելի քան բացորոշվում են ազգային, կրոնա-ազգային տարրերը, մաքառողական, դիմադրողական, ազատագրական պայքարի ոգին, դասային հակասություններն ու հակամարտությունները։ Մարդու անձնական, ներքին խոհերին, հոգեշահ տրամադրություններին՝ սեր, խրախճանք և այլն, վերանորոգվող գրականությունն անդրադառնում է երկրորդաբար։ Դրանք առավելապես ժողովրդա-աշուղական բանաստեղծության հիմնական խնդիրներ են։ Թեև այդ այդպես է, սակայն XVIII դ. գրավոր, առաջավոր բանաստեղծությունը, հին և նոր՝ գալիք դրականության միջին օղակը (կամ անցման շրջանի ծնունդը) լինելով, իր կրոնա-ազգային գաղափարախոսությամբ, որը հենց հայկական կլասիցիզմի գաղափարախոսությունն է, միաժամանակ չի սահմանազատվում, չի կտրվում ժողովրդա-աշուղական բանաստեղծությունից, չի հակադրվում նրան, այլ ընդհակառակը՝ համախոս է նրան, հաճախ օգտվում է նրա ժողովրդաշունչ արվեստից, կիրառում է ժողովրդա-աշուղական երգի հյուսվածքի, տաղաչափության ու հանգավորման ձևեր ու եղանակներ։ Դասական և ժողովրդական ստեղծագործությունների արվեստի ու բովանդակության կենսական գծերի համադրությամբ է բնորոշ ու առանձնահատուկ անցման կամ վերանորոգության շրջանի գեղարվեստական գրականությունը։ Դա հայկական կլասիցիզմի նախնական էտապի յուրահատկությունն է. Մ. Սեբաստացու, Պ. Դպրի, Պ. Ղափանցու, Հ. Նալյանի, Պ. Նախիջևանցու, Հ. Բյուզանդացու, Հար. Կարնեցու, Պ. Կաղզվանցու, Թ. Ջուղայեցու, Գր. Օշականցու, Հովհ. Կարնեցու և այլոց գրական ստեղծագործությունները (տարբեր չափերով) այս երևույթի արդյունք են։

XVIII դ. հին և նոր գրական երևույթների խաչաձև զարգացման հաջորդ շոշափելի արդյունքը գիտական, տեսական, ճանաչողական բանաստեղծության ուղղաձիգ զարգացումն է։ Հայտնի է, որ ամեն մի ժողովրդի մշակութային զարթոնքի կամ վերանորոգության շրջանում, իբրև գրական մշակութային բնականոն երևույթ, լուսավորական գործնական միջոց, զարգանում է նաև գիտական, տեսական, ճանաչողական գրականությունը։ Այդպես է և հայ նոր և ընդհանուր վերանորոգության շրջանում՝ XVIII դ.։ Հայոց անցած դարերից եկող բարոյա-կրթական, գիտապատմական-ճանաչողական գրականության ընդգրկումները մեծ չափերի են հասնում։ Ստեղծվում են ճշգրիտ և հասարակական բոլոր գիտություններին և արվեստներին, գրականության, նրանց հիմնական և երկրորդական ճյուղերին, ենթաճյուղերին նվիրված արձակ և չափածո, ոտանավոր երկեր։ Հայ իրականության համար բոլորովին նորություններ էին բնագիտության, մետաֆիզիկայի, երկրաչափության, թվաբանության, տնտեսագիտության, ինչպես նաև պետության, իշխանությունը-

---

6 «Հորիզոն», 7. VI. 1916։

ների, հասարակական, դատական, քննչական կազմակերպությունների կառուցվածքի, դերի և նշանակության, գոյություն ունեցող դասերի և դասակարգերի, հասարակության և նրա բոլոր խավերի, ընտանիքի և նրա անդամների իրավունքների ու պարտականությունների, նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ կանոնական ոտանավորները և այլ երկերը (Խ. Էրզրումեցի, Մ. Սեբաստացի, Հ. Նալյան, Հ. Շահամիրյան, Թ. Ջուղայեցի և այլք)։ XVIII դ. հայ գիտական, տեսական, ուսուցողական բանաստեղծության շերտերում նկատում ենք նաև այնպիսի նոր բնագավառներ, ինչպիսիք են՝ պատմագիտությունը, բառարանագիտությունը, բժշկագիտությունը (Խ. Էրզրումեցի, Մ. Անանյան, Մ. Ջամչյան, Գ. Պալատեցի), նոր, եվրոպական երաժշտագիտությունն ու պոետիկան (Խ. Էրզրումեցի, Մ. Սեբաստացի, Ստ. Ագոնց, Գր. Կապասքալյան և այլք)։

Գեղարվեստական ճանաչողական գրականության այս ծրագրային, լայնահուն ընթացքի մեջ վերափոխվում, մեծանում է նաև գրական հրապարակախոսության դերն ու կշիռը։ Առաջին անգամ հայոց դարավոր պատմության մեջ գրական հրապարակախոսությունը արձակ և չափածո երկերով բարձրացնում է հայ ժողովրդի իրավատնտեսական-քաղաքական ազատության, եկեղեցական ու մշակութային կյանքի առաջնահերթ հարցերը՝ միասնաբար։ Դարի գրական հրապարակախոսությունն աչքի է զարնում քննադատական և վերլուծական հատկությամբ, ընդհանրացման նոր ոճով, նոր մտայնությամբ։ Գրական հրապարակախոսությունն առաջադրում է հայ ժողովրդի ազգային անկախության, Հայաստանի քաղաքական ազատության, ռուսական կողմնորոշման խնդիրները (Իսրայել Օրիի նամակները Պետրոս I-ին, Մ. Սաֆարյանի, Գր. Կամպանյանի և այլոց «Հայոց ազգի ազատության ծրագիրը», Հովսեփ Էմինի «Ինքնակենսագրությունը», Հ. Շահամիրյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակը», Թ. Ջուղայեցու «Ողբ Հայաստանաց» պոեմը և այլն)։ Գրական հրապարակախոսությունը նոր ուժով առաջադրում է նաև կրթական, լուսավորական, բարոյագիտական, տնտեսագիտական բնույթի շատ այլ հարցեր՝ երիտասարդության ազգային-գաղափարական դաստիարակության, կրթության, օրիորդաց դպրոցներ, թաղային նոր վարժարաններ բացելու, աղքատ երեխաներին ձրի ուսում տալու, տնանկներին, որբերին, բանտարկյալներին օգնելու նպատակով հասարակական և եկեղեցական նոր գանձանակներ կազմակերպելու հարցերը և այլն (Խ. Էրզրումեցի, Մ. Սեբաստացի[7], Հ. Նալյան, Զ. Կաղզվանցի, Հ. Շահամիրյան, Թ. Ջուղայեցի և այլք)։ Ընդհանուր մտավոր շարժման, ազգային պատմագիտության, գիտա-ճանաչողական գրականության աննախադեպ նվաճումն է գրական երեք կոթողների ծնունդը XVIII դ.՝ «Բառգիրք Հայկազեան լեզուի» (Մ. Սեբաստացի), «Պատմութիւն հայոց» (Մ. Ջամչյան), «Ազգարար» (Հ. Շմավոնյան)։

Այս պարագաներում գեղարվեստական գրականության մեջ դեռևս իշխում էր նաև կրոնական մտայնությունը։ Դա XVIII դարի հին և նոր գրական երևույթների խաչաձև զարգացման առանձնահատուկ գծերից էր։ Գրական երկերի, բանաստեղծությունների զգալի մասը տակավին կրոնական նյութ-

---

7 Մ. Սեբաստացին 1724 թ. Տրանսիլվանիայում բացում է օրիորդաց դպրոց, ուր սովորում են 17 հայ աղջիկներ. Հ. Նալյանը, հետևելով նրան, 1745 թ. Գում-Գափուի մայր դպրատանը կից բացում է օրիորդաց առանձին դպրոց։

կամ կրոնական երանգ ունեն։ Նոր ժամանակների համար անհամատեղելի կամ հետադիմական թվացող այդ երևույթը բացատրվում է հայության ազգային վիճակով, նրա իրավատնտեսական, քաղաքական յուրակերպ կացությամբ. «Միջին դարերի աշխարհայացքը,— գրում է Ֆ. Էնգելսը,— գերազանցապես աստվածաբանական է։ Եվրոպական աշխարհը փաստորեն զուրկ էր ներքին միասնությունից և քրիստոնեության միջոցով էր համախմբված ընդդեմ ընդհանուր, արտաքին թշնամու»[8]։ Գիտական այս խորունկ ընդհանրացումը լիովին վերաբերում է նաև հայոց անցյալին, ներառյալ XVIII դ.։

XVIII դ. ընդհանուր վերանորոգության վճռական շրջան էր, անցման շրջանը։ Պետականությունից և ներքին միասնությունից զրկված ու աշխարհացրոնք, պարսկա-թուրքական դաժան տիրակալների ճնշմանն ու հարստահարմանը ենթարկված հայության ազգային վերակենդանության գործում, հիրավի, դեռևս դեր ուներ կատարելու հայոց եկեղեցին։ Եվ իսկապես, XVIII դ. սկզբից ի վեր հայ ժողովրդին մահանման քնից վեր հանելու, նրա ազգային, մտավոր, մշակութային պայքարը առաջ մղելու գործում նշանակալի դեր էին կատարում վերակառուցվող եկեղեցիները, կրոնական միաբանություններն ու դպրոցները։ «Հայկական վերածնունդը,— գրում է Վ. Բրյուսովը,— սերտորեն կապված է Մխիթարյան միաբանության հետ»[9]։ Ազգային եկեղեցին ջանում էր հարմարվել հայ նոր և ընդհանուր վերանորոգության շարժմանը։ Այլ կերպ ասած, XVIII դ. հայ եկեղեցու դերը չէր նվազել, թեև միաժամանակ ասպարեզ էին գալիս հասարակական նոր խմբեր ու հոսանքներ։ Նույն դարի հայ ազատագրական շարժման գործիչ Հովսեփ Էմինը, խստագույնս քննադատելով եկեղեցականներին, բացահայտելով նրանց արատները, հայ եկեղեցուն, ազգային կրոնին տալիս է մեծ դեր։ Ըստ Հովսեփ Էմինի՝ ժամանակակից հայ ազատագրական պայքարի շարժիչ ուժերն են՝ հոգևորականությունը, վաճառական դասը և ժողովուրդը[10]։

Գրավոր բանաստեղծության բոլոր ներկայացուցիչները՝ սկսած հոգևոր հովիվներից՝ Մ. Սեբաստացի, Հ. Նալյան, Ս. Երևանցի, Պ. Ղափանցի, Պ. Նախիջևանցի և վերջացրած ժողովրդական բանաստեղծներով՝ Պ. Դպիր, Հովհ. Կարնեցի, ռուսական կողմնորոշման երգիչներով՝ Գր. Կամպանյան, Պ. Կաղզրվանցի, Գ. Մելիքսեդեկյան, Ս. Պատկանյան և ուրիշներ, գրում են մեծ

---

8 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, ч. I, էջ 295։

9 Վ. Բրյուսով, Հայերի և Հայաստանի մասին, Երևան, 1967, էջ 104։

10 Կ. Ա. Դանիելյան, Հայ մեմուարական գրականության պատմությունից, Երևան, 1976, էջ 107։ Նույնիսկ Շահամիրյանները, որ զարգացնելով Հովսեփ Էմինի հայացքները իրենց հրապարակախոսական, ծրագրային երկերում, անկախ ու ազատ հայկական հանրապետության օրենսդրության մեջ, եկեղեցին անջատում էին պետությունից, դարձյալ չէին մերժում, կամ չէին դիմադրում հոգևորականությանը, ընդհակառակը՝ ապագա հանրապետության ղեկավար կազմում առանձնահատուկ տեղ էին հատկացնում նրանց ներկայացուցիչներին։ Նկատենք նաև, որ XVIII դ. զարգացող «թրի և գրչի» (լեռ) շարժումների նշանավոր ներկայացուցիչների միջև ուժեղանում է նաև գործնական կապն ու համագործակցությունը (Շեհրիմանյանների և Իսրայել Օրու, Շեհրիմանյանների, Շահումյանների, Շահամիրյանների, Մխիթարյանների միջև, անձամբ Մ. Սեբաստացու և Հովհաննես Կոլոտի միջև և այլն։ Այս առումով հույժ ուշագրավ է Պ. Խաչատրյանի «Մի էջ Շահամիրյանների և Մխիթարյանների մատենագրական առնչություններից» քննական ուսումնասիրությունը, ուր հեղինակը բացահայտում է «Հայկազյան բառարանի» ուղեցուցային դերը Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» նշանավոր գրքի համար։

մասամբ կրոնական նյութ կամ կրոնական երանգ ունեցող երգեր։ Ուրեմն վերանորոգվող գեղարվեստական գրականության ոլորտներում կրոնական երգի աշխուժությունը հետադիմության արտահայտություն չէր, այլ՝ ազգի վերակենդանացման գաղափարի համար գործադրվելիք միջոց։

Միջնադարյան գեղարվեստական երկն առհասարակ, ինչպես նաև XVIII դ. անցման շրջանի գրական ստեղծագործությունը, պետք է գնահատել ոչ թե նրանց կրոնական և աշխարհիկ նյութերի և պատկերների հարաբերության չափանիշով, այլ նրանց ներքին էությամբ, առաջադրված հարցերի կենսական նշանակությամբ, այն չափանիշով միայն, թե գրական երկն ինչպես է հարաբերում ժամանակի առաջատար շարժմանը, ժողովրդի ազգային ճակատագրի հետ կապված իրադարձություններին։

Անցման շրջանի հայ իրականության համար կրոնական երգի դերի բարձրացումը բնականոն, անխուսափելի երևույթ էր։ Գրական անկում չէր այդ, այլ՝ գրական վերելքի սկզբնական երևույթ։ Հոգևոր երգը վերափոխվում, աշխուժանում է Հայության համար ստեղծված իրավաքաղաքական բարդ ու հակամետ այն հանգամանքներում, որոնց մասին խոսք եղավ վերևում։

Վերանորոգվող հին և նոր գրական երևույթների խաչաձև զարգացման հաջորդ շոշափելի արդյունքը գեղարվեստական երկի լեզվի վիճակի բարեփոխությունն է։ XVIII դ. գեղարվեստական արձակ, չափածո և թատերական երկեր էին հյուսվում և՛ հարուստ, գեղեցկառճ դասական հայերենով, և՛ «պարզ բանիւ՝ մատչելի գրաբարով, և՛ սկզբնավորվող նոր գրական, ժողովրդական լեզվով՝ աշխարհաբարով, և՛ հայատառ թուրքերենով։ Այս երևույթը կար և նախորդ դարերում, բայց XVIII դ. այն ստանում է զարգացման առավել լայն և ծրագրային բնույթ։ Հրապարակ են գալիս գրաբար և աշխարհաբար բազմատեսակ գործեր՝ բանաստեղծություններ, գեղարվեստական արձակ էջեր, թատերգություններ, հրապարակախոսական, կրթական, բարոյագիտական հոդվածներ, պատմագիտական, աստվածաբանական, փիլիսոփայական նոր հետազոտություններ, ընթերցանության և քերականության դասագրքեր, այբբենարաններ, բառարաններ և այլն։ Նորահայտ գրական փաստերի համաձայն XVIII դ. Մխիթարյան միաբանները գրում և բեմադրում էին նաև աշխարհաբար թատերատիպ խաղեր, պիեսներ[11]։ Ազգային նոր գրականության զարգացումը ուղեկցվում էր հայ նոր լեզվաշինության համար այն թեժ պայքարով, որ մղում էին XVIII դ. վերանորոգության շարժման առաջավոր գործիչները՝ գրոց լեզվի լատինական աղճատումների դեմ։ Այս առումով XVIII դ. թևակոխում էր հայ լեզվաշինության պատմության համար ևս նոր շրջան՝ անցման շրջան։ Մի կողմից անհրաժեշտ էր պայքար՝ ազատելու ոսկեդենիկ գրաբարը լատինամիտ դպրոցի կործանարար ազդեցությունից, փրկելու, վերակենդանացնելու հայ հին և միջին դարերի մատենագիտական հարստությունը և այն ի սպաս դնելու վերանորոգվող գրական շարժմանը, մյուս կողմից անհրաժեշտ էր կանոնական հիմքերի վրա դնել, ոտքի կանգնեցնել գրական նոր աշխարհաբարը՝ հայ կրթական, լուսավորական շարժման գաղափարները հնարավորին չափ ժողովրդի մեջ տարածելու, «մերազնեայ համբակաց» կրթելու, դաստիարակելու նպատակով։ Մ. Սեբաստացին,

11 Հ. Լ. Զեքիյան, նշվ. աշխ., էջ 15—26։

Հ. Նալյանը, Պ. Դպիրը, Հովհ. Կարնեցին և այլք, երբ գրում էին գրաբար և աշխարհաբար բազմազան երկեր, խորապես գիտեին վերանորոգվող գրական շարժման համար «մեծագունեղ օգտակարութիւնն աշխարհաբարիս։ «Զայս քերականութիւնս,— գրում է Մ. Սեբաստացին՝ ուսումն սկզբնավորող մանուկներին ուղղելով իր խոսքը,— գրաբար լեզվով չգրեցի, քանզի ձեզի աշխարհաբար հայերենն պետք է»[12]։ Դարի ազգային գործիչները ցավով մատնացույց են անում աշխարհաբար գրական հայերենի իրավազրկության պատմական դառն պատճառը. «Վասն անտերունչ գոլոց ազգին մերոյ, ոչ է այնքան գործածեալ աշխարհաբար լեզուն մեր ի գրուածս և այսու եղեալ է որպէս թէ զանսովոր ինչ»,— դժգոհում է Մ. Սեբաստացին[13]։ Հայ նոր և ընդհանուր վերանորոգության շարժման լուսամիտ գործիչները մտածում էին ոչ թե պայքար հրահրելու գրաբարի և աշխարհաբարի միջև, ինչը պատմական անհրաժեշտություն դարձավ XIX դ. 30—50-ական թվականներին միայն, այլ գրոց հին լեզվի անաղարտ պահպանությամբ և գրական նոր աշխարհաբարի կանոնական գործածությամբ, նաև հայատառ թուրքերեն գրականության օգնությամբ, նրանց զուգահեռ զարգացման պայմաններում, խթանելու հայ վերանորոգվող գրական-կրթական բարդ շարժումը։

Վերանորոգվող գեղարվեստական գրականության նվաճումները ամրապնդվում էին զարգացող հայ-ռուսական հարաբերությունների ոլորտներում։

Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 1828 թ. պատմական իրադարձությունը հայոց վերածննդի առաջին հուսադրող քայլն էր։ Երկու ժողովուրդների փոխհարաբերությունները սկսվում են վաղ շրջաններից, սակայն հայության համար բախտորոշ այդ գործողության բուն նախապատմությունը շրջագծում է XVIII դ.։ Իրապես, հայ ժողովրդի գրական վերանորոգության շարժումը Արևմուտքով չէր սկսվում ու ավարտվում։ Արևելքում, բուն հայրենիքում ծայր առած ազգային-ազատագրական շարժումները և Արևմուտքում՝ հայ դպրության վերակենդանացման ու մշակութային շարժումների ալիքները ներթափանցում են հայաշատ հեռու և մոտիկ կենտրոնները և գնալով առավել խոր արձագանք ստանում ռուսական հողում։ Անվիճելի է, որ XVIII դ. ի վեր, հայության արտաքին և ներքին, ընդհանրական կյանքի վրա բոլոր կողմերով ո՛չ մի ժողովուրդ, և ո՛չ մի երկիր այնքան խոր ու արմատական, այնքան նշանակալից դեր չի կատարել, որքան Ռուսաստանը և ռուս ժողովուրդը։ Օտար նվաճողներից հալածված, աշխարհասփյուռ հայ ժողովրդի մոլորյալ զանգվածների ճակատագրի տնօրինման, նրան պարսկա-թուրքական լծից ազատագրելու հարցում վճռաբար և պետականորեն մտահոգվել է Ռուսաստանը։ Պետրոս I-ի և Եկատերինա II-ի կայսերական հրամաններն ու հրովարտակները՝ հայության տարագիր զավակներին ռուսական հողում բնակեցնելու, նրանց իրավա-տնտեսական, օրենսդրական առանձնաշնորհումների վերաբերյալ և այլն, նպաստում են հայ ժողովրդի նոր և ընդհանուր վերանորոգության շարժմանն առհասարակ։ XVIII դ. ի վեր Մոսկվան, Պետերբուրգը, Աստրախանը, Նոր Նախիջևանը, Ղղլարը, Մոզդոկը դառնում են հայության տնտեսական և մշակութային կյանքի հաստատուն, ապահով կենտրոնները։ Այս բոլորի հետ միասին նաև Ռուսաստանի

12 Մ. Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհարարի, Վենետիկ, 1727, էջ 3։
13 Նույն տեղում, էջ 4։

և Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև ծագած պատերազմները և հատկապես 1768—1774, 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմներում Ռուսաստանի ունեցած առաջավոր դիրքն ու նվաճումները ոգեշնչում են հայ ժողովրդին, խորացնում նրա մեջ ազատասիրական հույսերը՝ և հավատը Ռուսաստանի նկատմամբ։ «Ուստի ունեմք պարտականութիւն,— գրում են Աստրախանի հայոց Դատաստանագրքի հեղինակները,—մինչև վերջին կաթիլ արեամբ միով հաւատարմութեամբ ծառայել ամենաողորմ կայսերութեան մերոյ ռուսաց և հրամանաւ նորին կայսերական մեծութեան, որպէս յայտնի է 1765-ի յունուար 13-ի հրովարտակաւ, հետևիլ ըստ սահմանադրութեան կանոնին մերոյ»[14]։

Պատմաքաղաքական այս նպաստավոր իրադարձությունները ծնում են դաղափարական մտավորականության նոր ուժեր, հայ առևտրական, զինվորական, կրթական, եկեղեցական շրջաններից վեր բարձրացող ազգային նոր գործիչներ՝ Իսրայել Օրի, Դավիթ Բեկ, Ստեփանոս Շահումյան, Մխիթար Սպարապետ, Տեր-Ավետիս, Հովսեփ Էմին, Մովսես Սաֆարյան, Գրիգոր Կամպանյան, Շահամիրյաններ, Թադեոս Ջուղայեցի, Հովսեփ Արղության, Հակոբ Ջուղայեցի, Սիմեոն Երևանցի, Ղուկաս Կարնեցի, Ստեփանոս Խոջումյան, Վառլամ Վահանյան, Ասլան Աթաբեկյան, Գևորգ Մելիքսեդեկյան, Սերովբե Պատկանյան, Մինաս Բժշկյան և այլք։ Սրանց գործնական ջանքերով ընդհանուր հայության մեջ ներթափանցում և արմատավորվում է ռուսասիրության ոգին, ռուսասիրական տրամադրությունը։ Այդ գործիչների անուններով կամ նրանց մասին մեզ հասել են հայ-ռուսական բարեկամական առնչություններն արձագանքող բազմաբնույթ երկեր՝ աղոթքներ, ավանդույթներ, քարոզներ, թղթեր, նամակներ, ուղերձներ, կոնդակներ, պատմական-հրապարակախոսական, քերականական աշխատություններ, դասագրքեր, բառարաններ, գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններ, բանաստեղծություն, ուղեգրություն, զրույց, տեսիլ և այլն, որոնք վերանորոգվող գեղարվեստական գրականության մեջ ստեղծում են նոր շերտեր։

Հայ-ռուսական հարաբերությունների շուրջ հյուսված գեղարվեստական առաջին ստեղծագործությունները կարող են նկատվել Իսրայել Օրու և հայ մելիքների Պետրոս I-ին ուղված թղթերում ակնարկված ավանդական զրույցներն ու գուշակությունները։ Այս բնույթի երկերի մասին գիտական, քննական մի ամբողջ հայացք ունենալու համար պարտական ենք ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանին։ Ցավոք, խնդրո առարկա հարցի շուրջը եղած գործերը մեզ հասել են ոչ իբրև գրական ամբողջական երկեր, այլ սոսկ հուշեր, վերապատումներ միայն։ «Մոսկովյան օգոստափայլ տնից պիտի գա մեծ մի իշխան, ավելի քաջարի, քան Ալեքսանդր Մակեդոնացին, պիտի իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը, վերականգնի քրիստոնյաների ազատությունը»[15]։ Այս է նրանցում շոշափված հարցերի գաղափարական հանգուցակետը։ Նյութեր են դրանք, նկատում է Ա. Գ. Հովհաննիսյանը, որ մատակարարում են մեզ վերին աստիճանի հետաքրքրական և նշանակալից վկայություններ։ Անհրաժեշտ է հետաղոտել այդ նյութերը, ցույց տալ, քանդել

14 Մատենադարան, ձեռ. № 7383, թ. 35ա։

15 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 13։

միջնադարյան տեսիլների և գուշակությունների կծիկը և գտնել հայ ազատագրական իշխող մտայնության այն թելը, որ ծայր առնելով հեռու անցյալից, դալիս հասնում է Իսրայել Օրու ժամանակաշրջանը, միջնադարից մինչ նոր ժամանակները[16]։ Հայոց ազատագրության հարցի շուրջ հյուսված գաղափարի ավանդույթի նորոգված այս մասունքների հայտնությունը թույլ է տալիս մտածելու, որ ռուսական կողմնորոշման գրական առանձին առկայծումներ եղել են նաև XVIII դ. առաջ։ Այնուամենայնիվ, հայ ազատագրական հարցի ավանդական նորոգ խորհուրդը, արգեն իրրև գեղագիտական հայացք, իրրև առարկայական, կենսական ըմբռնում արտահայտվում է XVIII դ. արձակ և չափածո բազմաթիվ ստեղծագործություններում։ Դրանց կանդրադառնանք առանձին։

Ինչպես արգեն նկատեցինք, հայոց մշակութային նոր զարթոնքը գեղարվեստական գրականության զարգացումը դնում է գաղափարական նոր ուղեգծի վրա, գրականությունը սկսում է կրել առաջացող ազգային, քաղաքական նոր հոսանքների ազդեցությունը։ XVIII դ. գեղարվեստական գրականությունը, իրրև անցման շրջանի գրականություն, ամբողջության մեջ, ունի ազգային լուսավորական ուղղություն։ Արվեստի ու բովանդակության առանձնահատկություններով այն շրջագծում է հայ նոր գրականության նախապատմությունը և ամուր հիմքեր ստեղծում նրա զարգացման համար։ XVIII դ. գեղարվեստական գրականության համար չլուծված առաջնային հարցը ոչ թե աշխարհականացումն էր (այն սկսվել էր դեռ XII—XIII դդ.), այլ՝ ազգայնացումը, գրականության մեջ ազգային ոգու, գաղափարական ուղղության, ազգային-ազատասիրական ընավորության հաստատումն ու վերահաստատումը։ Անցման այս շրջանն է նախագծում հայ նոր գեղարվեստական գրականության վերելքի ճանապարհը։ Նոր գրականության հաղթանակը, XIX դ. երկրորդ քառորդում պայմանավորվում է տակա երեք հիմնական գործոնների՝ աշխարհարար գրական լեզվի, աշխարհիկ բովանդակության և ազգային դեմոկրատական գաղափարախոսության միասնական զարգացմամբ։ Այսպիսի գրականության առաջնորդը եղավ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպով։

ХАРАКТЕРНЫЕ ЧЕРТЫ ОБНОВЛЯЕМОЙ АРМЯНСКОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ XVIII в.

ШУШАНИК НАЗАРЯН

Резюме

Армянское обновительское движение, которое преобретает свой новый облик в совместном развитии общественно-политической и культурной жизни XVIII в., воздействует также на художественную литературу. Для последней — это период обновления, содружества и созвучия старого с новым и, одновременно, период внутренней борьбы нового со старым.

16 Նույն տեղում, էջ 15։

Результатом совместного развития старых и новых литературных явлений XVIII в. является проникновение первых идей европейского классицизма в армянскую действительность.

Этот переходный период предначертал подъем армянской новой художественной литературы. Победа новой литературы в первой половине XIX в. обусловлена единством трех основных факторов: литературным языком (ашхарабар), мирским содержанием и национальной (уже не религиозно-национальной) буржуазно-демократической идеологией. Вождем такой литературы стал великий просветитель Хачатур Абовян.